

Luys Lnyu®



ՀՀ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՄՓՈՓ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
2026 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	1
ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ	2
ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ	6
ՀՀ պետական բյուջեի եկամուտները	6
ՀՀ պետական բյուջեի ծախսերը	9
ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման	11
ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ ծրագրերի	16
ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը	17
ՀՀ պետական պարտքը	19
Պետական բյուջեի ռիսկերը	20
ԱՄՓՈՓՈՒՄ	22

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԼՂ	Լեռնային Ղարաբաղ
ԿԲ	Կենտրոնական բանկ
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՄԺԾԾ	ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՏՏ	Տեղեկատվական տեխնոլոգիաներ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կառավարության քաղաքականության հիմնական ուղղություններն ու ծրագրային առաջնահերթությունները սահմանվում են կառավարության ծրագրով և այլ ռազմավարական փաստաթղթերով: Սակայն դրանց իրականացումն ապահովող կոնկրետ գործողությունները ստանում են հստակություն պետական բյուջեի նախագծում, որտեղ արտացոլվում է առաջիկա տարվա ֆինանսական ռեսուրսների բաշխումը՝ ըստ ոլորտների և ծրագրերի: Այսպիսով, պետական բյուջեի նախագծի վերլուծությունը հնարավորություն է տալիս գնահատել կառավարության իրական առաջնահերթությունները և պատկերացում կազմել առաջիկա տարում իրականացվելիք ծրագրերի մասին:

Նպատակների իրագործման հարցում կառավարության հնարավորությունները փոխկապակցված են տնտեսական միջավայրի հետ: Այսպես՝ մի կողմից դրական տնտեսական զարգացումները մեծացնում են կառավարության ֆինանսական ռեսուրսները, մյուս կողմից՝ վարվող քաղաքականություններն ու իրականացվող ծրագրերը կարող են դրական ազդել տնտեսական զարգացումների վրա: Այս համատեքստում պետական բյուջեի վերլուծությունը պետք է իրականացվի երկու ուղղությամբ.

- 1) տնտեսական զարգացումների ուսումնասիրություն, որը թույլ է տալիս հասկանալ այն միջավայրը, որի շրջանակում ձևավորվում է բյուջեն,
- 2) կառավարության ծրագրերի և միջոցառումների վերլուծություն, որը հնարավորություն է տալիս գնահատել կառավարության հնարավոր ազդեցությունը հետագա տնտեսական զարգացման վրա:

Այս երկկողմանի մոտեցումը ապահովում է բյուջեի առավել ամբողջական և նպատակային գնահատում: Միևնույն ժամանակ, կառավարության խնդիրներն ու նպատակները չեն սահմանափակվում միայն տնտեսական ուղղություններով: Ուստի անհրաժեշտ է դիտարկել նաև, թե ինչպիսի ռեսուրսներ են ուղղվում այլ առանցքային ոլորտներին՝ պաշտպանությանը և անվտանգությանը, մարդկային կապիտալի զարգացմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և մի շարք այլ ռազմավարական առաջնահերթություններին:

Բացի վերը նշվածից, 2026թ. բյուջեի վերլուծությունն էլ ավելի է կարևորվում այն հանգամանքով, որ 2026 թվականը ՀՀ գործող կառավարության ծրագրի վերջին տարին է, և այդ տարվա բյուջեն պետք է արտացոլի կառավարության ծրագրով սահմանված նպատակների և ծրագրերի իրագործման եզրափակիչ փուլը՝ նախատեսելով համապատասխան ֆինանսավորման ռեսուրսներ:

Սույն վերլուծության նպատակն է ուսումնասիրել մակրոտնտեսական զարգացումները և դրանց հարկաբյուջետային հետևանքները, ինչպես նաև քննարկել կառավարության կողմից որդեգրված ծախսային ուղղությունները, դրանց իրատեսականությունը և համապատասխանությունը ստեղծված իրավիճակին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ


2022-2023թթ. ՀՀ տնտեսական աճը բավական բարձր տեմպ ուներ՝ հիմնականում պայմանավորված արտաքին գործոններով՝ մասնավորապես դեպի ՀՀ կապիտալի և մարդկանց էական ներհոսքով: 2024 թվականին տնտեսական աճի տեմպը աստիճանաբար դանդաղել է, սակայն մնացել է բարձր մակարդակում՝ որոշ չափով պայմանավորված լինելով նաև 2023թ. վերջում սկիզբ առած գործոններով, օրինակ՝ ոսկու վերաարտահանմամբ: Տնտեսական աճի տեմպը որոշակի տատանողական է եղել նաև 2025թ., սակայն շարունակում է մնալ համեմատաբար բարձր մակարդակում: Այնուամենայնիվ, ըստ 2026թ. պետական բյուջեի նախագծի, սպասվում է, որ 2025թ. տնտեսական աճի տեմպը որոշակի կդանդաղի՝ 2024թ. 5.9%-ից հասնելով 5.2%: Աճի դանդաղումը պայմանավորված է նաև արտաքին աշխարհի զարգացումներով: Մասնավորապես, գործընկեր երկրներում 2025թ. նույնպես կանխատեսվում է տնտեսական աճի տեմպերի դանդաղում, իսկ միջնաժամկետում՝ վերադարձ իրենց պատմական միջին աճերից ցածր տնտեսական աճերի:

2026 թվականի համար պետական բյուջեի նախագծով կանխատեսվում է շուրջ 5.4% տնտեսական աճ, ինչը ներառում է նաև պետական կապիտալ ծախսերի դերի պահպանման, Սոթքի հանքավայրի անխափան գործունեության, Ամուլսարի շահագործման, ինչպես նաև կառուցվածքային բարեփոխումների հնարավոր ազդեցությունները:

Տնտեսական աճի վերաբերյալ ՀՀ կառավարության կանխատեսումները գտնվում են այլ կառույցների կանխատեսումների միջակայքի շրջանակում: Մասնավորապես, 2025թ. համար կառավարության կողմից սպասվող 5.2% տնտեսական աճի ցուցանիշը մոտ է 2025թ. բյուջեի և 2026-2028թթ. ՄԺԾԾ-ի հիմքում դրված կանխատեսումներին, մինչդեռ այն փոքր-ինչ բարձր է ԱՄՀ կանխատեսումից, որը կազմում է 5.0%: Հարկ է նշել, որ կառավարությունն իր կանխատեսումն էականորեն վերանայել է դեպի ներքև 2025-2027թթ. ՄԺԾԾ-ի համեմատ, որի հիմքում դրված սցենարով աճը 2025թ. պետք է կազմեր 5.8%: Միևնույն ժամանակ, ՀՀ ԿԲ կանխատեսումներն ավելի բարձր են. ԿԲ կողմից

մշակված երկու սցենարի դեպքում էլ տնտեսական աճը 2025թ. 5.7%-ից բարձր է կանխատեսվում:

Գծապատկեր 1. 2025-2028 թվականների տնտեսական աճի կանխատեսումները, %



Կառավարությունը վերանայել է նաև 2026թ. տնտեսական աճի կանխատեսումները՝ բարձրացնելով այն 0.2 տոկոսային կետով՝ 2025թ. բյուջեի կանխատեսումների համեմատ և 0.3 տոկոսային կետով՝ 2026-2028թթ. ՄԺԾԾ համեմատ: Այնուամենայնիվ, այն 0.3 տոկոսային կետով ցածր է 2025-2027թթ. ՄԺԾԾ-ի համեմատ: ԱՄՀ-ի կանխատեսումը 2026թ. համար մոտ է ՀՀ կառավարության կանխատեսմանը և նույնիսկ փոքր-ինչ գերազանցում է՝ 0.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, 2025թ. համար ԱՄՀ-ն կանխատեսում է ավելի ցածր տնտեսական աճ, քան ՀՀ կառավարությունը (0.2 տոկոսային կետով), ինչը չեզոքացնում է 2026-ի ավելի բարձր կանխատեսումը: ԿԲ կանխատեսումները բավական բարձր են. ըստ սցենար Բ-ի՝ 2026թ. աճը կկազմի 6.2%, իսկ երկու սցենարների միջինը կազմում է շուրջ 6.0%:

Ըստ կառավարության կանխատեսումների՝ 2027-2028թթ. տնտեսական աճը կլինի համապատասխանաբար 5.4% և 5.3%, որոնք մոտ են ԿԲ երկու սցենարների միջին արժեքներին:

Աղյուսակ 1. 2026թ. պետական բյուջեի հիմքում դրվող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները¹

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշներ	2022	2023	2024	2025	2026	2027	2028
	փաստ.	փաստ.	փաստ.	սպասում	ծրագիր	կանխ.	կանխ.
Անվանական ՀՆԱ, մլրդ դրամ	8,501.4	9,492.5	10,193.4	10,997.1	11,933.7	12,952.8	14,050.8
Տնտեսական աճ, %	12.6	8.3	5.9	5.2	5.4	5.4	5.3
ՀՆԱ դեֆլյատորի աճ, %	8.0	3.1	1.4	2.6	3.0	3.0	3.0
Գնաճ (ժամանակ. վերջ), %	8.3	-0.6	1.5	3.2	3.1	3.1	3.0
Գնաճ (միջին), %	8.6	2.0	0.3	3.3	3.1	3.0	3.0
ՀՆԱ իրական աճն ըստ ճյուղերի ավելացված արժեքների, %							
Արդյունաբերություն	6.9	-3.0	3.6	0.2	8.2	8.2	5.4
Գյուղատնտեսություն	-2.8	-0.4	1.5	3.4	2.7	2.7	2.6
Շինարարություն	18.6	15.6	14.1	16.0	5.8	5.1	5.0
Ծառայություններ	18.4	12.5	7.5	4.2	4.8	5.0	5.6
Զուտ հարկեր	8.1	11.0	-1.6	12.6	5.7	5.7	5.8
ՀՆԱ ծախսային բաղադրիչների իրական աճերը, %							
Վերջնական սպառում	4.3	6.8	5.2	7.3	4.4	4.4	4.3
Պետական	-2.2	10.2	-9.5	7.7	-3.0	-2.7	-1.3
Մասնավոր	5.6	6.3	7.9	7.3	5.5	5.4	5.1
Հիմնական միջոցներում ներդրումներ ²	14.0	9.0	11.2	22.2	9.1	7.3	7.5
Պետական	17.9	31.6	7.3	22.5	16.6	11.0	12.4
Մասնավոր	13.5	5.8	11.9	22.1	7.8	6.6	6.6
Արտահանում	59.9	35.8	27.6	-31.5	-6.4	2.6	4.1
Ներմուծում	35.0	35.4	28.3	-26.9	-6.9	1.5	2.5
Արտաքին հատված (մլն ԱՄՆ դոլար)							
Ընթացիկ հաշիվ	144	-670	-1,195	-1,509	-1,339	-1,343	-1,350
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-100	-343	-732	-1,425	-1,351	-1,352	-1,328
Արտահանում	10,339	14,718	19,072	13,436	12,431	12,781	13,351
Փոփոխություն, %	107.7	42.3	29.6	-29.5	-7.5	2.8	4.5
Ներմուծում	10,439	15,062	19,804	14,861	13,781	14,133	14,679
Փոփոխություն, %	71.3	44.3	31.5	-25.0	-7.3	2.6	3.9
Դրամական փոխանցումներ	1,480	1,013	804	936	972	1,005	1,038
Արտաքին հատված (ՀՆԱ-ի նկատմամբ %)							
Ընթացիկ հաշիվ	0.7	-2.8	-4.6	-5.4	-4.6	-4.4	-4.2
Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ	-0.5	-1.4	-2.8	-5.1	-4.6	-4.4	-4.1
Արտահանում	53.0	60.9	73.5	48.0	42.7	41.7	41.2
Ներմուծում	53.5	62.3	76.3	53.1	47.3	46.1	45.3
Դրամական փոխանցումներ	7.6	4.2	3.1	3.3	3.3	3.3	3.2

¹ ՀՀ կառավարության 2026 թվականի բյուջետային ուղերձ-բացատրագիր:

² Կապիտալ ներդրումներում ներառված չէ պաշարների փոփոխությունը, ներկայացված են միայն հիմնական միջոցներում կատարված կապիտալ ներդրումները, քանի որ դրա մեջ ներառվում են նաև վիճակագրական սխալները:

Ըստ 2026թ. բյուջեի հիմքում դրված սցենարի՝ 2025 և 2026 թվականներին շինարարության աճն առաջանցիկ կլինի տնտեսական աճի նկատմամբ, սակայն տնտեսական աճին հիմնական նպաստում կունենա ծառայությունների ճյուղը: 2026 թվականին կարագանա նաև արդյունաբերության աճի տեմպը՝ գերազանցելով ՀՆԱ-ի աճի տեմպին: Ակնկալվում է, որ 2026 թվականին արդյունաբերությունը կաճի 8.2%-ով, շինարարությունը՝ 5.8%-ով, ծառայությունները՝ 4.8%-ով, իսկ գյուղատնտեսությունը՝ 2.7%-ով: 2027-2028 թվականներին, պայմանավորված ներքին և արտաքին պահանջարկի աճով, տնտեսությունում իրականացվող պետական և մասնավոր ներդրումներով, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից արտահանման ու ներդրումների խթանմանն ուղղված քաղաքականություններով, արդյունաբերության աճի տեմպը կգերազանցի ՀՆԱ-ի աճի տեմպին և միջինում կկազմի 6.8% (պայմանավորված հանքարդյունաբերության, մասնավորապես՝ Ամուլսարի և Սոթքի գործունեությամբ, ինչպես նաև մշակող արդյունաբերության աճով): Ծառայությունները կաճեն միջինում 5.3%-ով (ծառայությունների աճը կշարունակի պայմանավորվել ՏՏ, զբոսաշրջության և ֆինանսական ծառայությունների աճերով), շինարարությունը՝ միջինում 5.0%-ով (պայմանավորված պետական կապիտալ ծախսերի (հիմնականում ենթակառուցվածքներում ներդրումների) և բնակարանային շինարարության աճերով), իսկ գյուղատնտեսությունը՝ միջինում 2.7%-ով (գյուղատնտեսության ոլորտի պետական օժանդակության ծրագրերով պայմանավորված ոլորտի աճով):

Կանխատեսումների նյութականացման դեպքում ՀՀ տնտեսական աճը 2021-2026թթ. միջինում կկազմի 7.2%՝ լինելով 0.2 տոկոսային կետով ավելի բարձր, քան թիրախավորվել էր ՀՀ կառավարության ծրագրով: Այնուամենայնիվ, պետք է հիշել, որ ՀՀ կառավարության ծրագրով բարենպաստ արտաքին միջավայրի պայմաններում թիրախը կազմում է 9.0%, իսկ 2022-2023 թվականների բարձր տնտեսական աճը (որի շնորհիվ է իրականում ձևավորվելու 7.2% միջին աճը) պայմանավորված էր հենց ՀՀ-ի համար դրական զարգացումներով (մարդկանց և կապիտալի ներհոսք, վերաարտահանում և այլն):


Արտահանման մասով սպասվում են բավական ցածր աճի տեմպեր 2025թ., որոնք փոքր-ինչ կվերականգնվեն 2026թ.: Արդյունքում 2025թ. ընթացիկ հաշվի մնացորդը ՀՆԱ-ի նկատմամբ կշարունակի վատթարանալ՝ հասնելով -5.4%-ի, իսկ 2026-ին, դանդաղ վերականգնվելով, կհասնի -4.6%-ի:

2025-ին ինչպես միջին, այնպես էլ 12-ամսյա գնաճը մոտ կլինեն նպատակային ցուցանիշին և միջնաժամկետում կկայունանան 3% մակարդակի շուրջ:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ըստ ՀՀ պետական բյուջեի ուղերձի՝ 2026թ. հարկաբյուջետային քաղաքականությունն ուղղված կլինի ծախսերի կառուցվածքի բարելավմամբ ուղեկցվող հարկաբյուջետային կոնսոլիդացիայի իրականացմանը, ինչը նշանակում է, որ պլանավորվում է նվազեցնել բյուջեի պակասուրդը 2025թ. սպասվող բարձր ցուցանիշից հետո, ինչպես նաև բարձրացնել կապիտալ ծախսերի կշիռն ընդհանուր ծախսերում:

Գծապատկեր 2. Պետական բյուջեների ցուցանիշների համեմատականը 2024-2026թթ., մլրդ դրամ



Անվանական արտահայտությամբ բյուջեի եկամուտներն ու ծախսերը ավելի բարձր կլինեն 2025-ին 2024-ի համեմատ և 2026-ին՝ 2025-ի համեմատ: Այսպես՝ 2026թ. բյուջեի եկամուտները 2025թ. սպասվող ցուցանիշի համեմատ կաճեն 258.1 մլրդ դրամով, իսկ ծախսերը՝ 195.0 մլրդ դրամով: Արդյունքում բյուջեի պակասուրդը փոքր-ինչ կնվազի 2025թ. սպասվող ցուցանիշի համեմատ՝ կազմելով 536.8 մլրդ դրամ:

ՀՀ պետական բյուջեի եկամուտները

2025թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճը կազմել է 14.3%, որի կազմում հարկային եկամուտների աճը կազմել է 13.9%, այլ եկամուտները՝ 34.5%, իսկ պաշտոնական դրամաշնորհների ծավալը նվազել է 61.3%-ով: Ակնկալվում է, որ ընդհանուր եկամուտների աճի տեմպը որոշակի կդանդաղի մինչև տարեվերջ և տարեկան արդյունքներով կկազմի 9.8%: 2025թ. ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճը պայմանավորված է եղել 2024թ. համեմատաբար ցածր բազայի առկայությամբ,

տնտեսական ակտիվության վերականգնմամբ և հարկման բազաների ընդլայնմամբ, ինչպես նաև հարկային վարչարարության բարելավմամբ:


Արդյունքում սպասվում է, որ 2025թ. բյուջեի եկամուտները կլինեն 2,832.8 մլրդ դրամ, իսկ 2026 թվականին բյուջեի եկամուտները կշարունակեն աճել՝ հասնելով 3,090.9 մլրդ դրամի, որը կկազմի 2026թ. ՀՆԱ-ի 25.9%-ը՝ 2025թ. համեմատ աճելով 0.1 տոկոսային կետով:

Հարկային եկամուտները 2025թ. կհասնեն 2,690.4 մլրդ դրամի՝ կազմելով ՀՆԱ-ի 24.5%-ը, ինչը նախորդ տարվա նկատմամբ շուրջ 1.0 տոկոսային կետով բարելավում է: Սակայն հարկ է նշել, որ այդ 1.0 տոկոսային կետը դեռևս սպասում է և կախված ՀՆԱ-ի փաստացի ցուցանիշից, ինչպես նաև հարկային եկամուտների հավաքագրման տարեվերջյան դինամիկայից, կարող է փոխվել:

2026թ. բյուջեով ինչպես և նախորդ տարիների բյուջեներով ակնկալվում է հարկային եկամուտների շարունակական բարելավում: 2026թ. բարելավումը ըստ ՖՆ կանխատեսումների կկազմի 0.4 տոկոսային կետ, իսկ միջնաժամկետում հարկային եկամուտները կհասնեն ՀՆԱ-ի 25.2%-ին:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության էական բարելավում վերջին ժամանակներում պլանավորվում է գրեթե բոլոր տարիների ՄԺԾԾ-ներով և բյուջեներով, սակայն կարող ենք արձանագրել, որ հարկեր/ՀՆԱ-ն 2021-2024թթ. ընթացքում փաստացի բարելավվել է ընդամենը 0.9 տոկոսային կետով, իսկ 2022-2024 թվականների ընթացքում (2021թ. համեմատ)՝ ընդամենը 0.5 տոկոսային կետով: Հետևաբար մինչև 2026թ. 24.9% պլանավորումը ևս անիրատեսական է թվում:


Գծապատկեր 3. Պետական բյուջեի հարկային եկամուտները և հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը³



Պետական բյուջեի կառուցվածքում հարկային եկամուտների տեսակարար կշիռը կշարունակի աճել: Բյուջեի եկամուտների կառուցվածքում հարկային եկամուտների կշիռն արդեն իսկ բարձր է՝ 2021-2024թթ. միջինում կազմել է 93.7%: Ընթացիկ և առաջիկա տարիներին այդ կշիռը կշարունակի աճել՝ 2025 և 2026 թվականներին հասնելով համապատասխանաբար 95.9% և 96.2%-ի, իսկ մինչև 2028թ.՝ 97.1%-ի: Հարկային եկամուտների կշռի աճը կլինի հիմնականում այլ (ոչ հարկային) եկամուտների կշռի նվազման հաշվին: Վերջինս 2021-2024թթ. միջինում կազմել է շուրջ 5.5%, իսկ 2025 և 2026 թվականներին, ըստ կանխատեսումների, կկազմի համապատասխանաբար 3.4% և 3.2% և մինչև 2028թ. կհասնի 2.8%-ի: Պաշտոնական դրամաշնորհների կշիռը 2021-2024թթ. միջին ցուցանիշի համեմատ կնվազի 0.1 տոկոսային կետով՝ 2025 և 2026 թվականներին կազմելով համապատասխանաբար շուրջ 0.7% և 0.6%, իսկ հետագա տարիներին կշարունակի նվազել՝ 2028թ. հասնելով մինչև 0.1%-ի:

³ 2023-2024 թվականների հարկային եկամուտների ցուցանիշներում հիպոթեթային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները ներառված են, մինչդեռ 2019-2022 թվականների ցուցանիշներում դրանք ներառված չեն:

Գծապատկեր 4. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2021-2028 թվականներին⁴, %




ՀՀ պետական բյուջեի ծախսերը

2026թ. պետական բյուջեի ծախսերի դինամիկան պայմանավորված կլինի միջնաժամկետում հարկաբյուջետային կոնսոլիդացիա ապահովելու և տնտեսական ու անվտանգային ենթակառուցվածքների ամրապնդման նպատակադրումներով: Ըստ այդմ, կառավարությունը պլանավորում է միջնաժամկետում նվազեցնել ընթացիկ ծախսերի կշիռը ՀՆԱ-ում՝ մեծացնելով կապիտալ ծախսերինը՝ հասցնելով վերջինիս կշիռը 5.7%-ի մինչև 2028 թվականը:

Բյուջեի ընդհանուր ծախսերի աճը 2025թ. նույնպես բավական բարձր է: Այսպես՝ հունվար-սեպտեմբեր ամիսներին ընդհանուր ծախսերի աճը կազմել է 14.1%, որում ընթացիկ ծախսերն աճել են 7.7%-ով, իսկ կապիտալ ծախսերը (ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ)՝ 50.0%-ով: Սպասվում է, որ աճի տեմպերը կմնան բարձր մինչև տարեվերջ, ինչի դեպքում ընդհանուր ծախսերի աճը կկազմի 16.2%, որում ընթացիկ ծախսերինը՝ 12.0%, իսկ կապիտալ ծախսերինը՝ 34.7%:

⁴ 2023 և 2024 թվականների ցուցանիշներում հիփոթեքային վարկերի տոկոսավճարների գծով եկամտային հարկի վերադարձի գումարները ներառված են հարկային եկամուտներում:

Գծապատկեր 5. Պետական բյուջեի ծախսերը՝ ըստ տնտեսագիտական դասակարգման




ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի ծախսերը որոշակիորեն կնվազեն 2026թ. և միջնաժամկետում: 2026թ. ընթացիկ ծախսերը կկազմեն ՀՆԱ-ի 24.5%-ը՝ 2025թ. սպասվող ցուցանիշի համեմատ նվազելով 0.1 տոկոսային կետով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների կշիռը կկազմի 5.9%՝ նվազելով 0.7 տոկոսային կետով: Միջնաժամկետում՝ մինչև 2028թ. ընթացիկ և կապիտալ ծախսերի հարաբերակցությունները ՀՆԱ-ի նկատմամբ կշարունակեն նվազել՝ հասնելով համապատասխանաբար 23.0% և 5.7%-ի:

Այնուամենայնիվ, բյուջեի ցուցանիշները, հատկապես կապիտալ ծախսերի մասով այնքան էլ արժանահավատ չեն՝ հաշվի առնելով պատմական զարգացումները: Մասնավորապես, կապիտալ ծախսերի մասով վերջին տարիներին գրեթե միշտ պլանավորվել են էական աճեր, սակայն դրանք տեղի չեն ունեցել ծախսերի թերակատարման հետևանքով: Մասնավորապես, թեև առկա է եղել կատարողականի որոշակի բարելավման միտում, 2019-2024թթ. կապիտալ

ծախսերի միջին կատարողականը կազմել է 87.7%: Ավելին, բարելավման միտումը խաթարվել է 2024-ին, երբ կապիտալ ծախսերի կատարողականը կազմել է 84.7%՝ նախորդ տարվա 95.8%-ի համեմատությամբ: Իրավիճակը պահպանվել է նաև 2025թ., երբ առաջին ինն ամիսների բյուջեի կատարողականը կապիտալ ծախսերի մասով կազմել է 71.9%, այն դեպքում, երբ նախորդ տարի նույնպես կազմել էր գրեթե նույնքան՝ 70.9%: Հետևաբար, թերակատարումների նման փաստացի միտումների պարագայում կապիտալ ծախսերի գծով ապագա էական աճերի նյութականացումն անիրատեսական է թվում:

Գծապատկեր 6. Կապիտալ ծախսերի (ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր) ծավալները 2019-2025թթ. (մլրդ դրամ) և դրանց կատարողականը (%)



ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական դասակարգման

Պետական բյուջեի ծախսերը ներկայացվում են նաև ըստ դրանց ծախսման ոլորտային ուղղությունների, որը կոչվում է գործառնական դասակարգում: Այդ դասակարգմամբ ծախսերը բաժանվում են հիմնական խմբերի՝ ցույց տալով պետական քաղաքականության հիմնական առաջնահերթություններն ըստ ոլորտների:

Ընդհանուր ծախսերը 2026թ. կազմելու են 3,627.6 մլրդ դրամ՝ 2025թ. բյուջեի համեմատ աճելով 5.4%-ով: Աճը հիմնականում պայմանավորված կլինի սոցիալական պաշտպանություն, ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների և կրթությանն ուղղվող ծախսերի աճերով, որոնց նպաստումները կկազմեն համապատասխանաբար 2.5, 2.1 և 1.7 տոկոսային կետ:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով ծախսերի աճը կկազմի 9.1%՝ հիմնականում պայմանավորված պետական պարտքի գծով տոկոսավճարների և պետական ապարատի ծախսերի աճերով: Սոցիալական

պաշտպանությունն ուղղված ծախսերը կաճեն 9.6%-ով: Այս ոլորտում հիմնականում աճելու են կենսաթոշակների գծով ծախսերը, սակայն դա չի նշանակում, որ կենսաթոշակառուները ավելի բարձր թոշակ են ստանալու, այլ խոսքը կուտակային կենսաթոշակային ֆոնդին հատկացվող գումարների աճի մասին է: Վերջինս 2025թ. բյուջեի համեմատ աճելու է 34 մլրդ դրամով: Սոցիալական ծախսերի կազմում աճն ապահովող ուղղություն է նաև Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանվածներին օժանդակելու համար աջակցության ծրագրի գծով ծախսերի աճը, որը կկազմի շուրջ 20.0 մլրդ դրամ: **Ի դեպ, բյուջեով աշխատավարձերի աճ նույնպես չի նախատեսվում, ինչը նշանակում է, որ բնակչության կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ ծախսերը չեն ավելանալու:**

2025թ. համեմատ, 2026թ. էականորեն կնվազեն պաշտպանությանն ուղղվող ծախսերը՝ շուրջ 15.2%-ով և ընդհանուր ծախսերի աճին կհակազդեն 3.0 տոկոսային կետով:

Կրթությանը և առողջապահությանն ուղղվող ծախսերը ևս աճելու են 2026-ին՝ համապատասխանաբար 19.3% և 26.8%-ով: Կրթության գծով ծախսերը հիմնականում պայմանավորված են «Հանրակրթական դպրոցների շենքերի վերակառուցում, հիմնանորոգում» միջոցառման շրջանակներում ծախսերի էական աճով, իսկ առողջապահության ոլորտի ծախսերի էական աճը պայմանավորված է առողջության համապարփակ ապահովագրության ներդրմանն ուղղված ծախսերով (առավել մանրամասն տե՛ս սույն տեղեկանքի հաջորդ բաժնում):

Աղյուսակ 2. 2026թ. պետական բյուջեի ծախսերի աճի տեմպը՝ ըստ գործառնական դասակարգման 2025թ. բյուջեի համեմատ

Ծախսատեսակը	Աճի տեմպը, %	Նպաստումը, տ.կ.
Ընդամենը	5.4	5.4
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	9.1	2.1
Պաշտպանություն	-15.2	-3.0
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	0.2	0.0
Տնտեսական հարաբերություններ	11.3	0.8
Շրջակա միջավայրի պաշտպանություն	2.6	0.0
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	-20.8	-0.1
Առողջապահություն	26.8	1.3
Հանգիստ, մշակույթ և կրոն	-2.7	0.0
Կրթություն	19.3	1.7
Սոցիալական պաշտպանություն	9.6	2.5
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	6.4	0.1

Բյուջեի ծախսերի կառուցվածքը նույնպես էական փոփոխությունների է ենթարկվելու 2026 թվականին: Այսպես՝ ծախսերի շուրջ մեկ քառորդը կամ 23.4%-ը ուղղվելու է ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին, որը հիմնականում բաղկացած է պետական պարտքի գծով տոկոսավճարներից և պետական ապարատի ծախսերից: Այս ուղղության ծախսերի կշիռը ոչ միայն բավական բարձր է բյուջեում, այլ նաև շարունակելու է աճել ինչպես 2025թ. բյուջեի, այնպես էլ 2024թ. փաստացի ցուցանիշների համեմատ՝ համապատասխանաբար 0.8 և 0.7 տոկոսային կետով:

Սոցիալական ապահովության ոլորտին ուղղվող ծախսերի կշիռն ամենամեծն է ընդհանուր կառուցվածքում և 2026թ. կազմելու է 27.4%՝ 2025թ. բյուջեի համեմատ աճելով 1.1 տոկոսային կետով՝ պայմանավորված վերը նշված ծախսերի ուղղություններով:

Պաշտպանությանն ուղղվող ծախսերի ծավալի կրճատման արդյունքում կնվազի նաև դրանց տեսակարար կշիռն ընդհանուր ծախսերում՝ հասնելով 15.6%-ի և 2025թ. բյուջեի համեմատ կրճատվելով 3.8 տոկոսային կետով, իսկ 2024թ. փաստացի ցուցանիշի համեմատ՝ 3.0 տոկոսային կետով:

Աղյուսակ 3. Պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը՝ ըստ գործառնական դասակարգման

Ծախսատեսակը	Ծավալը 2026թ. բյուջեով, մլրդ դրամ	Կշիռն ընդհանուրի մեջ, %	Կշռի փոփոխությունը	
			2024թ. փաստի համեմատ	2025թ. բյուջեի համեմատ
Ընդամենը	3,627.6	100.0	-	-
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	848.8	23.4	0.7	0.8
Պաշտպանություն	566.3	15.6	-3.0	-3.8
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	248.1	6.8	-0.9	-0.4
Տնտեսական հարաբերություններ	256.0	7.1	0.2	0.4
Շրջակա միջավայրի պաշտպանություն	16.2	0.4	0.1	0.0
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	13.3	0.4	-0.1	-0.1
Առողջապահություն	213.1	5.9	0.6	1.0
Հանգիստ, մշակույթ և կրոն	46.2	1.3	-0.1	-0.1
Կրթություն	357.7	9.9	2.0	1.2
Սոցիալական պաշտպանություն	993.0	27.4	-1.5	1.1
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	69.0	1.9	-	0.0

«Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» ոլորտին ուղղվող ծախսերի կշիռը ևս կնվազի ընդհանուր ծախսերի կառուցվածքում, քանի որ դրանց անվանական մակարդակը գրեթե չի փոխվելու 2026-ին:

Ծախսերի կառուցվածքում աճելու են նաև կրթության և առողջապահության ոլորտներին ուղղվող ծախսերի կշիռները՝ հասնելով համապատասխանաբար 9.9%-ի և 5.9%-ի և 2025թ. բյուջեի համեմատ ավել լինելով 1.2 և 1.0 տոկոսային կետով:

ՀՆԱ-ի նկատմամբ բյուջեի ծախսերի նվազումը 2026թ.՝ 2025թ. բյուջեով հաստատվածի համեմատ հիմնականում պայմանավորված է լինելու պաշտպանությանն ուղղվող ծախսերի կրճատմամբ: Ծախսեր/ՀՆԱ հարաբերակցությանը դրական նպաստում կունենան առողջապահության և կրթության ոլորտներին ուղղվող ծախսերի աճերը:

Աղյուսակ 4. Պետական բյուջեի ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ՝ ըստ գործառնական դասակարգման

Ծախսատեսակը	% ՀՆԱ-ում 2026թ. բյուջե	ՀՆԱ-ի նկատմամբ կշռի փոփոխությունը	
		2024թ. փաստի համեմատ	2025թ. բյուջեի համեմատ
Ընդամենը	30.4	1.4	-1.2
Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	7.1	0.5	0.0
Պաշտպանություն	4.7	-0.6	-1.4
Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն	2.1	-0.2	-0.2
Տնտեսական հարաբերություններ	2.1	0.1	0.0
Շրջակա միջավայրի պաշտպանություն	0.1	0.0	0.0
Բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ	0.1	0.0	0.0
Առողջապահություն	1.8	0.3	0.2
Հանգիստ, մշակույթ և կրոն	0.4	0.0	0.0
Կրթություն	3.0	0.7	0.2
Սոցիալական պաշտպանություն	8.3	0.0	0.0
Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր	0.6	-	0.0


Ուշագրավ է նաև վերջին տարիների՝ 2018 թվականից սկսած բյուջեի ծախսերի կուտակային աճերի ուսումնասիրությունը: Այդ նպատակով հաշվարկվել և Գծապատկեր 7-ում ներկայացվել են բյուջետային ծախսերի՝ ըստ գործառնական դասակարգման բաղադրիչների աճերի ինդեքսները՝ 2017–2026թթ. ժամանակահատվածի համար, որտեղ 2017թ. ընդունվել է բազային տարի՝ 100, և

հաջորդ տարիների ցուցանիշները ներկայացվել են դրա համեմատ: Գծապատկերում յուրաքանչյուր գիծ ներկայացնում է որոշակի ոլորտի ծախսերի կուտակային փոփոխությունը 2017թ. մակարդակի նկատմամբ՝ հնարավորություն տալով համեմատել, թե որոնցում է ծախսերի աճն առավել արագ կամ դանդաղ եղել:

Արդյունքներից կարող ենք նկատել, որ **դիտարկվող ժամանակահատվածում ամենաբարձր աճ արձանագրվել է «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին» (հիմնականում՝ պետական կառավարում, պարտքի տոկոսավճարներ) ուղղվող ծախսերի գծով**. դրանք 2026-ին 2017-ի համեմատ կաճեն շուրջ 3.1 անգամ: Ընդ որում, այս ծախսերի էական աճ է գրանցվելու և՛ 2025, և՛ 2026 թվականներին: Այս միտումը բնականաբար խնդրահարույց է, քանի որ դրա հետևանքով կարող է սահմանափակվել մնացած ոլորտների ֆինանսավորման հնարավորությունները՝ հատկապես երկարաժամկետ զարգացման տեսանկյունից: Ավելին, սա ցույց է տալիս ծախսերի ոչ համաչափ վերաբաշխում դեպի կառավարման համակարգեր՝ ճնշում առաջացնելով սոցիալական և տնտեսական առաջնահերթությունների նկատմամբ:

Հաջորդ ամենաբարձր աճերն ունեն շրջակա միջավայրի պաշտպանությանն ու կրթությանն ուղղվող ծախսերը, որոնք աճել են համապատասխանաբար շուրջ 3.0 և 2.9 անգամ: Պաշտպանությանը և տնտեսական զարգացմանն ուղղվող ծախսերն ունեցել են ավելի համեստ աճ՝ շուրջ 1.9-ից 2.0 անգամ:

Գծապատկեր 7. Պետական բյուջեի ծախսերի աճի ինդեքսը 2017-2026 թվականներին



ՀՀ պետական բյուջեի ծախսերը՝ ըստ ծրագրերի

ՀՀ պետական բյուջեն կառուցվում է ծրագրային բյուջետավորման տրամաբանությամբ, ինչը նշանակում է, որ բյուջետային ծախսերը պետք է ուղղված լինեն հստակ նպատակների և ծրագրերի իրագործմանը: Այս առումով, բացի տնտեսագիտական և գործառնական դասակարգմամբ բյուջետային ծախսերի վերլուծությունից, անհրաժեշտ է իրականացնել նաև բյուջետային ծրագրերի ուսումնասիրություն՝ առաջիկա տարվա կառավարության հիմնական ծրագրային ուղղությունները հասկանալու համար: Այս առումով, 2026թ. պետական բյուջեում ուշադրության արժանի ուղղություններից են.

- Նախատեսվում է ներդնել առողջապահության համընդհանուր ապահովագրության համակարգը, որի գծով նախատեսվել է ավելի քան 130.0 մլրդ դրամ: 2025թ. բյուջեով այս ուղղությամբ նախատեսված ծախսը կազմում էր ընդամենը 2.8 մլրդ դրամ, որը 2025-ի անցած երեք եռամսյակներում չի օգտագործվել: Այս առումով հարկ է նշել, որ 2021թ հաստատված և գործող կառավարության ծրագրով այս համակարգը պետք է ներդրվեր դեռևս 2023-ից և ամբողջությամբ գործարկվեր 2026-ից: Մինչդեռ համակարգի ուղղությամբ 2026 թ. բյուջեում են էական ծախսերը ներկայացվում:

- Լեռնային Ղարաբաղից ՀՀ բռնի տեղահանված անձանց կեցության, այդ թվում բնակարանային ապահովման և այլ ծախսերը հոգալու համար սոցիալական աջակցության ծրագրի գծով նախատեսված գումարները կավելացվեն՝ նախորդ տարվա 35.0 մլրդ դրամի չափով աջակցության փոխարեն նախատեսելով 55.0 մլրդ դրամ:

- Շուրջ 9.7 մլրդ դրամ գումար կհատկացվի անհուսալի վարկային պարտավորություններ ունեցող աշխատաշուկայից (ֆորմալ զբաղվածությունից) դուրս մնացած կամ մասնակի ֆորմալ զբաղվածություն ունեցող անձանց աջակցության համար:

- Աճելու է անկանխիկ եղանակով վճարումներից կենսաթոշակառուներին հետվճարի տրամադրման ծրագրի գծով նախատեսված ֆինանսավորումը՝ հասնելով 20.0 մլրդ դրամի: Վերջինիս արդյունավետության մասով, սակայն չկան գնահատականներ:

- 2026թ. նախատեսվել է նոր ծրագիր՝ անկանխիկ եղանակով վճարումներից հետվճարի տրամադրման համար, որի գծով կծախսվի շուրջ 3.5 մլրդ դրամ: Այս միջոցառման տրամաբանությունը կայանում է ArCa քարտերի միջոցով վճարումներ կատարելիս հետվճար ստանալու մեջ, որը վճարվելու է մասամբ պետական բյուջեից և ArCa-ի կողմից: Այնուամենայնիվ, միջոցառման իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքները սահմանված չեն, և հնարավոր չէ

հասկանալ, թե միջոցառման իրականացման արդյունքում ինչ սոցիալ-տնտեսական նպատակներ են ապահովվելու:

- «Ակադեմիական քաղաք» ծրագրի իրականացման նպատակով 2026 թվականին նախատեսվել է 4.9 մլրդ դրամ, որի շրջանակներում շարունակվելու են նախագծման և կառուցման աշխատանքները, միջազգային խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն ու պայմանագրերի սպասարկումը:

- Նախատեսվում է շարունակել 209 դպրոցների և 16 մանկապարտեզների կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքները՝ ապահովելով նաև դրանց հագեցումը անհրաժեշտ գույքով և սարքավորումներով: Այնուամենայնիվ, ըստ կառավարության ծրագրի, մինչև գործող կառավարության ծրագրի ավարտը (2026թ. հուլիս) նախատեսվում էր կառուցել թվով 300 դպրոց և 500 մանկապարտեզ: Պետք է նշել, որ այս պահի դրությամբ ավարտված են ընդամենը 59 դպրոցի աշխատանքները: Ակնհայտ է, որ նախատեսված 209 դպրոցների կամ մինչև 2026 թվականը 300 դպրոցի ցուցանիշին հասնելու համար անհրաժեշտ 241 դպրոցի կառուցման, հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքները հնարավոր չի լինի ավարտել անգամ մինչև 2026թ. ավարտը:

- Շուրջ 19.5 մլրդ դրամ նախատեսվում է ուղղել բարձր տեխնոլոգիաների ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտների աջակցությանը՝ միգրանտների (օտարերկրացիների), նոր աշխատողների ներգրավման և վերապատրաստման համար: 2026 թվականից կմեկնարկի նաև մասնագիտական աշխատանք կատարող միգրանտներին աջակցության տրամադրումը:


ՀՀ պետական բյուջեի պակասուրդը և հարկաբյուջետային ազդակը

Պետական բյուջեն 2025թ. առաջին ինն ամիսներին ձևավորվել է պակասուրդով (79.9 մլրդ դրամի չափ), որը, սակայն, էականորեն՝ 382.7 մլրդ դրամով շեղվել է պլանավորված մակարդակից: Այնուամենայնիվ, 2025թ. սպասվում է բավական բարձր պակասուրդ՝ 599.8 մլրդ դրամի չափով, որը բավական մոտ է բյուջեով պլանավորված մեծությանը:

2026թ. բյուջեի պակասուրդը կնվազի՝ հասնելով 536.8 մլրդ դրամի, ինչը կարտացոլվի նաև պակասուրդ/ՀՆԱ հարաբերակցության նվազման մեջ, որը կհասնի 4.5%-ի՝ 2025թ. սպասվող ցուցանիշի համեմատ նվազելով 1.0 տոկոսային կետով: Միջնաժամկետում կառավարությունը պլանավորում է պակասուրդի շարունակական նվազում: 2028թ. կանխատեսվում է, որ պակասուրդը կհասնի 392.4 մլրդ դրամի կամ ՀՆԱ-ի 2.8%-ին:

Այս պայմաններում հարկաբյուջետային ազդակը 2026թ. կլինի չեզոքին մոտ, իսկ միջնաժամկետում, պակասուրդի նվազմանը զուգահեռ կդառնա զսպող:


Գծապատկեր 8. Պետական բյուջեի պակասուրդը



Բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը 2026թ. նախատեսվում է իրականացնել գրեթե հավասարապես արտաքին և ներքին աղբյուրների հաշվին: Արտաքին աղբյուրներից նախատեսվում է ներգրավել 326.7 մլրդ. դրամ, իսկ ներքին աղբյուրներից՝ 210.0 մլրդ. դրամ: Սակայն **վերջին տարիներին գրեթե միշտ պլանավորվող և փաստացի ֆինանսավորման աղբյուրները չեն համապատասխանում իրար, ինչը հիմնականում պայմանավորված է ծրագրային վարկերի գծով կապիտալ ծախսերի թերակատարման և դրա հետևանքով արտաքին վարկային ռեսուրսների չստացմամբ:**

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղբյուրների հիմնական մասը ՀՀ 2026-2028 թվականներին ձևավորվելու է պետական արժեթղթերի տեղաբաշխումից գոյացող մուտքերից, ինչպես նաև պետական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդի միջոցներից: Իսկ արտաքին օժանդակության կառուցվածքում գերակշռելու են նպատակային ծրագրերի ֆինանսավորման համար նախատեսված բյուջետային աջակցության պաշտոնական դրամաշնորհներն ու վարկերը:

Գծապատկեր 9. Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման աղբյուրները, մլրդ դրամ




ՀՀ պետական պարտքը

Կառավարության պարտքի բեռը 2026-2028 թվականներին կաճի՝ 2027-2028թթ. հասնելով ՀՆԱ-ի 53.7%-ի: Պարտքի աճին միջնաժամկետ հատվածում կհակազդեն տնտեսական աճի և հարկաբյուջետային կոնսոլիդացիայի արդյունքում զգալի առաջնային հավելուրդի ձևավորման գործոնները:

2025թ. սպասվում է կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցության աճ 2024թ. համեմատ՝ շուրջ 1.5 տոկոսային կետով, ինչի արդյունքում պարտքը կհասնի ՀՆԱ-ի 49.5%-ին: Սակայն վերջինս հաշվարկված է բյուջեի պակասուրդի 599.8 մլրդ դրամ սպասվող ցուցանիշի կիրառմամբ: Առավել հավանական է, որ ծախսերի թերակատարում կարճանագրվի 2025թ., ինչի արդյունքում պակասուրդը, հետևաբար նաև պարտքի աճը ավելի փոքր կլինեն:

Այնուամենայնիվ, պարտքի աճը զգալի է եղել վերջին տարիներին: 2017-ի դեկտեմբերի վերջի համեմատ 2025թ. հոկտեմբերին կառավարության պարտքն արդեն իսկ աճել է 75.0%-ով, իսկ 2025թ. վերջում այդ աճը կկազմի 82.3% կամ շուրջ 2,460.0 մլրդ դրամ: 2026-ի բյուջեով ակնկալվում է, որ կառավարության պարտքը կկազմի 6,310.3 մլրդ դրամ կամ 15,152.8 մլն ԱՄՆ դոլար, այսինքն՝ 2017-ի տարեվերջի համեմատ կաճի 111.2%-ով կամ շուրջ 3,321.9 մլրդ դրամով:

Գծապատկեր 10. ՀՀ կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը 2020-2026թթ., %



2025թ. ներքին պարտքի կշիռը, սպասվում է, որ կկազմի 52.8%՝ ավելի բարձր լինելով արտաքին պարտքի կշռից ընդհանուր կառավարության պարտքի կառուցվածքում: Ներքին պարտքի կշիռը կշարունակի մնալ բարձր արտաքինի համեմատ նաև 2026 թվականին՝ կազմելով 50.8%: Սակայն 2028թ. արտաքին պարտքի կշիռը կրկին կգերազանցի ներքին պարտքի կշիռը՝ կազմելով 50.8%:

2026թ. և 2028թ. կառավարության պարտքի մակարդակը կշարունակի աճել և ըստ բյուջեի հիմքում դրված կանխատեսումների՝ 2027-2028թթ. կհասնի ՀՆԱ-ի 53.7%-ի: Ընդ որում, 2025թ. բյուջեի հիմքում դրված սցենարով պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ևս աճող էր, սակայն կայունանում էր 2027թ.-ին: Այժմ ստացվում է, որ պարտքի աճը նախատեսվել է կայունացնել մեկ տարի ավելի ուշ:

Պարտքի բեռին զուգահեռ կաճեն նաև պարտքի սպասարկմանն ուղղվող ծախսերը: Այսպես, 2026թ. պարտքի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները կկազմեն 419.9 մլրդ դրամ՝ 2025թ. բյուջեով պլանավորվածի համեմատ աճելով 6.5%-ով, իսկ 2024թ. փաստացի ցուցանիշի համեմատ՝ 33.9%-ով: Ընդ որում, կաճի նաև տոկոսավճարների կշիռն ընդհանուր ծախսերի կառուցվածքում՝ 2024թ. 10.6%-ից 2025թ. հասնելով 11.5%-ի, իսկ 2026թ.՝ 11.6%-ի:

Պետական բյուջեի ռիսկերը

2026թ. հարկաբյուջետային սցենարի առանցքային ռիսկերից առաջինը կապված է **մակրոտնտեսական անբարենպաստ զարգացումների հետ**, որոնք կարող են ձևավորվել ինչպես արտաքին, այնպես էլ ներքին շուկերի ազդեցությամբ: Դրանք ներառում են՝ ռուս-ուկրաինական պատերազմի ընթացքում ձևավորված

դրական գործոնների հնարավոր չեզոքացումը, մարդկանց և կապիտալի ներհոսքերի հետշրջումը, ռազմավարական ապրանքների գների աճը աշխարհաքաղաքական լարվածությունների խորացման պայմաններում, ինչպես նաև արտահանման մատակարարումների լոգիստիկ խոչընդոտների մեծացումը: Այս բոլոր զարգացումները կարող են միաժամանակ հանգեցնել հարկային բազաների սպասվածից փոքր ձևավորման և պետական ծախսերի վրա լրացուցիչ ճնշումների:

Երկրորդ խոշոր ռիսկը վերաբերում է հարկեր/ՀՆԱ հարաբերակցության սպասվածից դանդաղ բարելավմանը: Միջնաժամկետ հատվածում կառավարության հաշվարկներով հարկային վարչարարությունը պետք է ապահովի տարեկան միջինում 0.3 տոկոսային կետ բարելավում (2025–2028թթ.), սակայն վարչարարության ազդեցությունը ոչ գծային է և զգայուն տնտեսական ցիկլերի նկատմամբ, ինչն ավելացնում է թերակատարման ռիսկը:

Ռիսկեր կան նաև միջազգային ֆինանսական շուկաների անկայունության հետ կապված, մասնավորապես՝ տոկոսադրույքների բարձր մակարդակի պահպանմամբ, զարգացող երկրներում պարտքային ճգնաժամերի սրմամբ և համաշխարհային ֆինանսական շուկայում ռիսկերի աճով պայմանավորված:

Բացի այդ, նկատվում են նաև ներքին ռիսկեր, որոնք կարող են հանգեցնել լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությանը: Հնարավոր ռիսկեր են ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչության ինտեգրման դանդաղումը, նրանց աջակցության ծրագրերի հնարավոր երկարաձգումը, տարածաշրջանային անվտանգային միջավայրի վատթարացումը և պաշտպանության ծախսերի աճի պահանջը, ինչպես նաև արտահանելի հատվածի աջակցման համար նոր ծրագրերի անհրաժեշտությունը:

Առկա է նաև կապիտալ ծախսերի թերակատարման ռիսկ, որը բնորոշ է վերջին տարիներին: Թեև 2026թ. բյուջեով նախատեսված է կապիտալ ծախսերի բարձր մակարդակ՝ ՀՆԱ-ի շուրջ 6%-ի չափով, նախորդ տարիների կատարողականը ցույց է տալիս, որ թերակատարումների շարունակականությունը կարող է թուլացնել տնտեսական աճի խթանիչ ազդեցությունը:

2026թ. պետական բյուջեն ներառում է որոշ գործիքներ՝ նշված ռիսկերը կառավարելու նպատակով: Մասնավորապես.

- Բյուջեում սահմանվել է 39.3 մլրդ դրամի հարկաբյուջետային ռիսկերի կառավարման պահուստային ֆոնդ, որը նախատեսված է մակրոտնտեսական

շուկերի ազդեցությունները կլանելու համար: 2027 և 2028 թվականներին այդ ֆոնդի ծավալը համապատասխանաբար կազմում է 57.7 մլրդ դրամ և 71.6 մլրդ դրամ:

- Պետական ֆինանսական կայունությունը ամրապնդելու նպատակով կառավարությունը նախատեսում է ապահովել ՀՆԱ-ի առնվազն 1%-ի չափով «իրացվելիության բարձիկ» գանձապետական կայունացման հաշվին, որը կօգնի կառավարել ֆինանսական շուկերը և ապահովել բյուջեի շարունակական կատարումը նույնիսկ անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների պայմաններում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Տնտեսական աճը շարունակում է դանդաղման միտում ունենալ: 2024-2025թթ. տնտեսական աճի տեմպերը զգալիորեն ավելի ցածր են նախորդ տարիներին գրանցված բարձր ցուցանիշներից, որոնք պայմանավորված էին արտաքին դրական գործոններով՝ մարդկանց և կապիտալի ներհոսքով, ինչպես նաև վերաարտահանմամբ: ՀՀ կառավարության կանխատեսումների համաձայն՝ ՀՀ տնտեսական աճը կկայունանա 5.4%-ի շուրջ, ինչը նաև համահունչ է այլ կառույցների կանխատեսումների հետ:

Բյուջետային ուղերձում նշվում է, որ 2021-2026թթ. աճի տեմպի պայմաններում հնարավոր է լինում ապահովել կառավարության ծրագրով սահմանված 7.0% տնտեսական աճի թիրախը, քանի որ միջին աճը կլինի 7.2%: Մինչդեռ պետք է հիշել, որ ըստ ՀՀ կառավարության ծրագրի՝ բարենպաստ արտաքին միջավայրի պայմաններում թիրախը կազմում է 9.0%, իսկ 2023-2024 թվականների բարձր տնտեսական աճը (որի շնորհիվ է իրականում ձևավորվում 7.2% միջին աճը) պայմանավորված էր հենց ՀՀ-ի համար դրական զարգացումներով (մարդկանց և կապիտալի ներհոսք, վերաարտահանում և այլն): Հետևաբար, ձևավորված տնտեսական աճը կա՛մ պետք է դիտարկել 9.0% տնտեսական աճի թիրախին համապատասխանության տեսանկյունից, կա՛մ ՀՀ փաստացի տնտեսական աճի տեմպը պետք է ճշգրտել միանգամյա արտաքին գործոնների ազդեցություններից, որից հետո միայն համեմատել 7.0% տնտեսական աճի թիրախի հետ:

Հարկեր/ՀՆԱ հարաբերակցության բարելավումը կրկին ներառված է կանխատեսումներում՝ 2026թ. ակնկալվող 0.4 տոկոսային կետ աճով, սակայն դրա իրատեսականությունը հարցականի տակ է: 2021-2024թթ. ընթացքում հարկեր/ՀՆԱ-ի փաստացի բարելավումը կազմել է ընդամենը 0.5 տոկոսային կետ, այն դեպքում, երբ այդ տարիների բյուջեներով ու ՄԺԾԾ-ը նույնատիպ աճեր էին կանխատեսում յուրաքանչյուր տարվա համար: Նման հավակնոտ ցուցանիշները

ներառվել են նաև 2025-2026թթ. կանխատեսումներում, որոնք չիրագործվելու մեծ ռիսկ են կրում:

Բյուջեի պակասուրդը մնում է բարձր մակարդակում: 2025թ. սպասվում է ՀՆԱ-ի 5.5% պակասուրդ, որը 2026-ին կնվազի մինչև 4.5%-ի: Չնայած պակասուրդի որոշակի նվազմանը՝ այն շարունակում է չափազանց մեծ լինել: Հետագայում դրա նվազեցումն էլ ավելի է դժվարանալու, քանի որ, բացի ծախսային կարիքներից, պակասուրդի կրճատումը հանգեցնում է նաև տնտեսության վրա հարկաբյուջետային քաղաքականության զսպող ազդեցության ձևավորմանը՝ բացասաբար ազդելով հետագա տնտեսական աճի վրա:

Կառավարության պարտքի աճի բարձր տեմպերը չափազանց մտահոգիչ են: 2017-ի դեկտեմբերի վերջի համեմատ 2025թ. վերջում կառավարության պարտքի աճը կկազմի 82.3%: Իսկ 2026-ի բյուջեով ակնկալվող կառավարության պարտքի մեծությունը 2017-ի տարեվերջի մեծությանը կգերազանցի արդեն 111.2%-ով կամ շուրջ 3,321.9 մլրդ դրամով՝ հասնելով 6,310.3 մլրդ դրամի կամ 15,152.8 մլն ԱՄՆ դոլարի:

Պարտքի բեռին զուգահեռ աճելու են պարտքի սպասարկմանն ուղղվող ծախսերը: 2026թ. պարտքի սպասարկման համար վճարվող տոկոսավճարները կկազմեն 419.9 մլրդ դրամ՝ 2025թ. բյուջեով պլանավորվածի համեմատ աճելով 6.5%-ով, իսկ 2024թ. փաստացի ցուցանիշի համեմատ՝ 33.9%-ով: Կաճի նաև ընդհանուր ծախսերի կառուցվածքում տոկոսավճարների կշիռը՝ 2024թ. 10.6%-ից 2025թ. հասնելով 11.5%-ի, իսկ 2026թ.՝ 11.6%-ի:

Պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը ունի աճի միտում, ինչը պետական ֆինանսական կայունության տեսանկյունից մտահոգիչ է: 2025թ. ՀՀ կառավարության պարտքը հասնելու է ՀՆԱ-ի 49.5%-ի, իսկ 2026–2027թթ. այն աճելու է մինչև 53.7%, և միայն 2028-ին սպասվում է որոշակի կայունացում: Կանխատեսվող ժամանակահատվածում պարտքի աճող դինամիկայի պլանավորումը հանդիսանում է պարտքի կայունության վտանգների առաջացման առաջնային ախտանիշներից, ինչը բացասական ազդակ կարող է հաղորդել ներդրողներին:

Կապիտալ ծախսերի պլանավորումն աչքի է ընկնում անիրատեսական բարձր աճերով: 2019-2024թթ. կապիտալ ծախսերի միջին կատարողականը եղել է ընդամենը 87.7%, իսկ 2024-2025թթ. ինն ամիսներին՝ շուրջ 70-71%: Այս պայմաններում ՀՆԱ-ի մոտ 6% կապիտալ ծախսերի թիրախավորումը 2026-2028թթ. համար ցանկալի, բայց ոչ իրատեսական սցենար է, և այն կարող է խաթարել ֆինանսական ծրագրավորման արժանահավատությունը:

2018թ. հետո պետական բյուջեի ամենաարագ աճող ծախսային ուղղությունը եղել է «ընդհանուր բնույթի հանրային ծառայությունները», որը հիմնականում ներառում է պարտքի սպասարկման ծախսերը և պետական կառավարման ապարատի պահպանումը: 2026թ. այս ուղղության ծախսերը 2017թ. մակարդակի համեմատ աճել են շուրջ 3.1 անգամ՝ առաջանցիկ լինելով բոլոր մյուս ծախսերի համեմատ: Այս միտումը բնականաբար խնդրահարույց է, քանի որ դրա հետևանքով կարող է սահմանափակվել մնացած ոլորտների ֆինանսավորման հնարավորությունները՝ հատկապես երկարաժամկետ զարգացման տեսանկյունից: Ավելին, սա ցույց է տալիս ծախսերի ոչ համաչափ վերաբաշխում դեպի կառավարման համակարգեր՝ ճնշում առաջացնելով սոցիալական և տնտեսական առաջնահերթությունների նկատմամբ:

Պաշտպանության ծախսերը 2026թ. նվազելու են (շուրջ 15.2%-ով), ինչը հակասում է առկա աշխարհաքաղաքական իրավիճակին: Թեև անընդհատ խոսվում է խաղաղության մասին, սակայն վերջինս չի կարող երաշխավորվել առանց ամուր պաշտպանական համակարգերի: Այս առումով, **պաշտպանության գծով ծախսերի կրճատումը մտահոգիչ է:**

Առողջապահության համապարփակ ապահովագրության համակարգի ներդրումը, 2021թ. հաստատված և գործող կառավարության ծրագրով, պետք է սկսվեր 2023-ից և ամբողջությամբ ավարտվեր ու գործարկվեր 2026-ից: Մինչդեռ 2026թ. այդ միջոցառումը դեռևս նոր պետք է մեկնարկի:

Սոցիալական ուղղությամբ իրականացվող մի շարք ծրագրեր, ներառյալ անհուսալի վարկեր ունեցող քաղաքացիներին աջակցությունը, հետվճարների տրամադրումը և այլ «փող տրամադրելու» ծրագրերը, ցուցիչ են այն բանի, որ կառավարությունը մեծացնում է քաղաքացիներին ուղղակի դրամական միջոցների փոխանցումների ծավալները՝ առանց արդյունքների հստակ չափման մեխանիզմների: Այս ծրագրերի մասով 2026թ. էական աճեր են նախատեսվում, սակայն դրանց արդյունավետության վերաբերյալ գնահատականներ չկան:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: